պետն Նստուցին, որ առաքինութեամբ եւ բարի վարուք վկայեալ էր։ Եւ զայնպիսի արտաքսեալն վասն չար գործոց իւրոց դու ընդունեցար, զնա՛, որ այն մասնաւոր աթոռոյն արժան չի համարեցան, դու զնա ընդհանրական աթոռոյն փոխանորդ եդիր. նա որ զիւր տունն աւերէց, այս է զվարագ, դու զնա Էջմիածնայ շինող համարեցար. այլն տոլվաթաւորքն աշխարհական գոլով խմացան զնորա չար լինելն, եւ դու կաթողիկոս գոլով ոչ խմացար. նոցա դառն երեւեցաւ վասն այն ոչ ընդունեցան, այլ քեզ քաղցր երեւեցաւ, վասն այն ընդունեցար։ Նոյնպէս ամենայն չարք եւ հերձուածողք ընդունելիք են քեզ եւ սիրելի, եւ ողջափառք եւ պարկեշտք՝ ատելի են քեզ եւ թշնամի. եւ ոչ թէ միայն ընդունեցար այլ քեզ փոխանորդ կացուցեր եւ նուիրակ առաքեցեր. որ յինչ տեղ որ գնաց աղմկով եւ խռովութեամբ ելից։ Մանաւանդ քան զամենայն մեծ չարիք այս են, որ զքո ձեռագիրն տարաւ փափուն ետուր թէ ես վարդապետաք եւ եպիսկոպոսաք եւ ժողովրդաք հնազանդիմք Հռոմայ եկեղեցւոյն, եւ ընդունիմք զժողովն Քաղկեդոնի եւ զտոմարն Լեւոնի, եւ նզովեմք զԴիոսկորոս եւ զհամախոհքն նորա, եւ ասեմք ի Քրիստոս երկու բնութիւն եւ երկու կամք։ Եւ զայս ձեռագիրս օրինակն փափն տուեր պասմա գրոյ եւ յողարկեր է ի Լեհ. նոյնպէս եւ յամենայն տեղիս թէ Հայք ի մեր հաւատն են եկեր։ Ա՛յլ եւ ի Վանատիկու Հայերուն թուղթ է եկեր այս բանիս համար ի բազում տեղիս. եւ այս